



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ**

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«07» Տարի... 2017 թվականի № ...32...Վ...

**2017Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆՑ ԱՆԽԱՓԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրակայանների և ցանցերի շահագործման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 27.12.2007թ. N1605-Ն որոշման 180-րդ կետը՝ 2017թ. գարնանային վարարումների ժամանակ, էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրակայանների հիդրոտեխնիկական կառույցներով հորդաջրերի բացթողումը, էլեկտրատեղակայանքների, անավարտ և ժամանակավոր կառույցների, էներգետիկայի բնագավառի կարևորագույն այլ օբյեկտների պաշտպանությունը, նրանց անխափան աշխատանքն ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ստեղծել կենտրոնական հանձնաժողով հետևյալ կազմով՝
 - Հ. Ա. Հարությունյան** - Նախարարի տեղակալ (նախագահ),
 - Լ. Շահվերդյան** - Նախարարի խորհրդական (նախագահի տեղակալ),
 - Ա. Գրիգորյան** - Էներգետիկայի պետական տեսչության վերլուծության, վիճակագրության և շահագործման համակարգման բաժնի պետ,
 - Գ. Բալյան** - «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» (ԷԷՀՕ) ՓԲԸ գլխավոր ճարտարագետ,
 - Ս. Իգիթբաշյան** - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» («ԲԷՑ») ՓԲԸ տեխնիկական տնօրենի տեղակալ,
 - Ս. Կարապետյան** - «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ տեխնիկական և հրդեհային անվտանգության, շահագործման, հուսալիության և էկոլոգիայի ծառայության պետ (համաձայնությամբ),
 - Հ. Սարգսյան** - «Միջազգային էներգետիկ կորպորացիա» («ՄԷԿ») ՓԲԸ գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),
 - Գ. Մկրտչյան** - «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ ինժեներական խմբի ղեկավար (համաձայնությամբ),
 - Հ. Կոչնակյան** - «Հայկական ատոմային էլեկտրակայան» (ՀԱԷԿ) ՓԲԸ տեխնիկական տեսուհու ատե.

2. «Երևանի ՋԷԿ», «ԲԷՑ», «ՀԱԷԿ» ՓԲԸ-ների գլխավոր տնօրեններին՝

2.1. մինչև 2017թ. մարտի 15-ը ստեղծել հակավարարումային հանձնաժողովներ, գլխավոր ճարտարագետների կամ շահագործման գծով փոխտնօրենների նախագահությամբ, այդ աշխատանքների մեջ ներգրավելով փորձառու, առաջատար մասնագետների,

2.2. մշակել և հաստատել հակավարարումային միջոցառումների պլան և ապահովել դրանց ժամանակին կատարումը,

2.3. պատրաստականության վիճակի բերել ջրընդունիչ և ջրթող հիդրոտեխնիկական կառույցները, ջրահեռացման միջոցները, հեղեղատարները, լանջառունները, կողմնատար առուները, պոմպային համակարգերը և այլն,

2.4. մինչև վարարումը, ջրածածկվող տարածքից հեռացնել սարքավորումները, մեխանիզմները, նյութերը և այլ ունեցվածքը,

2.5. վթարային վերականգնողական աշխատանքներ կատարելու համար նախապատրաստել անհրաժեշտ քանակությամբ մեխանիզմներ, ավտոտրանսպորտ, բրիգադներ,

2.6. ապահովել վարարումների անցման հիդրոլոգիական կանխատեսումների ժամանակին ստացումը և հանձնումը ենթակա օբյեկտներին,

2.7. վարարումների ժամանակ սահմանել շուրջօրյա հերթապահություն:

3. Կենտրոնական հանձնաժողովին (Հ. Ա. Հարությունյան)՝ էներգահամակարգի անվտանգ և հուսալի շահագործման նպատակով առաջարկել.

ա) «Գազպրոմ Արմենիա», «ՄԷԿ», «ՀԷՑ», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ներին, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Հրազդան-5» հիմնարկին և «ՀրազԶԷԿ» ԲԲԸ-ին՝ իրականացնել սույն հրամանի 2-րդ կետի ենթակետերով նախատեսված միջոցառումները,

բ) «ՄԷԿ» և «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ներին՝ մշակել ընկերության աշխատանքային ռեժիմները և համաձայնեցնել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի հետ:

4.«ԷԷՀՕ» ՓԲԸ-ին՝ վարարումների ժամանակաշրջանում, համակարգի ռեժիմներն իրականացնելիս, խստորեն ղեկավարվել հիդրոտեխնիկական կառույցների աշխատանքները կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերով:

5. Տեղական հակավարարումային հանձնաժողովների նախագահներին՝ պարբերաբար տեղեկացնել կենտրոնական հանձնաժողովին հակավարարումային միջոցառումների կատարման ընթացքի մասին:

6. Կենտրոնական հանձնաժողովին (Հ. Ա. Հարությունյան)՝ համակարգել ընկերությունների հանձնաժողովների աշխատանքները և կատարված միջոցառումների մասին պարբերաբար զեկուցել ինձ:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:



ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ